«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝Ազգային տոների, ծեսերի կազմակերպան առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն ՝ *Աբովյան համայնքի<< Աբովյան քաղաքի թիվ 5 մանկապարտեզ>> ՀՈԱԿ*

Դաստիարակ ՝ *Ռինա Յախշիբեկյան*

Ղեկավար՝ *Ժաննա Ավետիսյան*

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Ազգային տոների, ծեսերի կազմակերպան առանձնահատկությունները կրթական գործընթացում 4
«Բարեկենդանի ծեսը» 11
Եզրկացություն 16
Գրականության ցանկ 17

Ներածություն

Ազգագրությունը, որը իր մեջ ներառում է միաժամանակ և՛ ազգային սովորույթները, և՛ ազգային ծեսերը, և՛ ազգային ավանդույթները, միաժամանակ ժողովրդագիտական աղբյուր է, որի հետազոտությունն ուրույն կերպով բացահայտում է ժողովրդի հոգևոր կյանքը: Այդպիսին է նաև բանահյուսությունը:

Ազգային ծեսերը, սովորույթները և ավանդույթները ժողովրդի մշակույթի գանձերն են, կարևոր սկզբնաղբյուրներ ժողովրդի ներքին կյանքի, տնտեսական զբաղմունքների, աշխարհայացքի և պատկերացումների հետազոտման համար: Ազգային ծեսերի, սովորույթների ւ ավանդույթների բազմակողմանի հետազոտությունները վեր են հանում մշակույթի այդ կարևոր ճյուղերի ոչ միայն պատմա-ճանաչողական-ժողովրդագրական նշանակությունը, այլև դրանց հասարակական, գեղարվեստական արժեքները: Պատմության ամեն մի դարաշրջան կերտումէ իր բնորոշ ազգագրությունն ու բանահյությունը, որտեղ դրսևորում են տվյալ ժողովրդի տնտեսական և հոգեկան կյանքը աշխարհագրական ըվյալ միջավայրում, հասարակական կեցության որոշ պայմաններում: Սովորույթի ուժը, բարքերի նորմաները, աստիճանաբար, աննակտելիորեն թափանցում են աշխատանքի պրոցեսների մեջ, ընտանեկան և մարդկային փոխհարաբերությունների, իրավական հասկացությունների, աշխարհյըմբռնման զանազան կողմերի, ինչպես նաև լեզվի, բանահյուսության, մի խոսքով՝ նյութական ու հոգեկան մշակույթի տարբեր բնագավառներում: Հայ ժողովուրդը հարուստ է այդպիսի մշակույթով:

Ազգային տոների, ծեսերի կազմակերպան առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հայկական սովորույթները, ծեսերը և ավանդույթենրը գալիս են դեռևս շատ հին ժամանակներից: Ազգագրական բնույթի նյութերի ու տեղեկությունների հանդիպում ենք թե՛ մեր ազգային և թե՛ օտար հեղինակների գրքերում: Այդպիսի աղբյուրներ են՝ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու, Մովսես Խորենացու, Մովսես Կաղանկատվացու, Կիրակոս Գանձակեցու և ուրիշ մատենագիրների գործեր: Ազգագրական հարուստ նյութ են բովանդակում նաև այլ ազգերի պատկանող պատմագիրների, աշխարհագրգետների, Հայաստան այցելած նշանավոր մարդկանց և ճանապարհորդների գրվածքները՝ Հերոդոտը, Ստրաբոնը, Պլինիանոսը, Տակիտոսը և այլն:

Հասարակական մտածողությունը մշտապես ծեսերի, անադույթների և սովորույթների խնդիրը դիտել է որպես կարևորագույն հարց: Ի՞նչ է մարդը, ո՞րն է նրա էությունը, կյանքի իմաստը, նրա տեղն ու դերը հասարակական հարաբերություններում: Այս և մարդու հասարակական էության հասարակական վիճակը զբաղեցրել են մեծագույն սոցիոլոգների մտքերն ու զգացմունքները[1]:

Հասարակական կյանքում ընդունված է, որ ազգակցական-արյունակցական ամուսնական կապերի սահմանափակումն ու արգելումը և այս հիմքի վրա սեռական սիրո առաջացումը (այն իր մեջ ամփոփում է օտարների մերձեցում, փոխադարձ համբերատարություն, հարազատություն և այլն) մարդու սոցիալացման և հասարակական էության ձևավորման հիմնական գործոններից է: Նախամարդկանց հանրությունների մեջ փոխազդեցությունների և ապրելաձևի այս սահմանափակումներին հաջորդում են նորանոր սահմանափակումներ և արգելքներ, որոնք արդեն կրում են սոցիալ-բարոյական բնույթ: Սոցիալացման երկարատև գործընթացի ընթացքում տեղի է ունենում մարդու հասարակական էության ձևավորման ավարտը: Դա արտահայտվում է կենդանում բնական ինքնապահպանումից, մարդու կոլեկտիվ-համատեղ պահպանմանը, անցման նոր ձևերի ու մեծանիզմների առաջացումով, որոնք հատուկ չեն կենդանական հանրություններին:

Այսպիսով, ծեսերը, ավնադույթները և սովորույթները

[1] Գասպարյան Յու.Ա., ՝Ժողովրդական ավանդույթները և սովորույթները հայ ընտանիքում՞ Երևան 2003թ.

ա) աշխատանքային, զգայական-առարկայական գործունեության միջոցով գոյության նյութայան միջոցների համատեղ կոլեկտիվ հայթայթում:

բ) լեզվի և նրա հիմքի վրա մտածողության ու գիտակցության ծագում ու զարգացում, մարդ-բնություն և մարդ-մարդ փոխազդեցությունում կարգավորման նշանային-տեղեկատվական նոր մեխանիզմի առաջացում:

գ) ամուսնական և բարոյական կոնկրետ սահմանափակումների և արգելքների ընդունում և գործառնություն: Արգելվում է ազգակցական-արյունակցական ամուսնությունը հանրության ներսում, աստիճանաբար նաև մարդկանմց փոխադարձ սպանությունները: Ամրապնդվում է հանրության բոլոր անդամների նկատմամբ փոխադարձ հոգատարությունը, հետևաբար՝ կյանքի պահպանման կոլեկտիվ պարտականությունը: Մարդու սոցիալացման հարյուր հազարավոր տարիների ընթացքում այս արգելքներն ու սահմանափակումները ավելացել և իմաստավորվել են, և աստիճանաբար ձևավորել են մարդու հասարակական էության մյուս հիմնական կողմերն ու հատկանիշները[2]:

Բայց մարդու տեսակային տարբերակիչ հատկությունները, որոնցով մարդիկ տարբերվում են կենդանիներից և հակադրվում նրանց, հասարակական են և կազմում են նրա հասարակական էությունը: Մարդը ոչ միայն բնական, այլ նաև հասարակական էակ է, իսկ բանական լինելը՝ նրա տեսակային տարբերակիչ հատկություններից է: Նրա հասարակական էության որոշիչ, հիմնական և համընդհանուր հատկություններն են՝ զգայական-առարկայական պրակտիկ գործունեությունը և նրա ունակությունը, լեզուն և հաղորդակցության հոդաբաշխ, նշանային-տեղեկատվական համակարգը, մտածողությունը ու գիտակցությունը, բարոյական և սոցիալական վարքի (հետագայում նաև՝ իրավաքաղաքական նորմերի ու կանոնների համակարգ ստեղծելու ունակությունը և, ընդհանրապես, մարդու և հասարակական էությունը բնութագրող այլ հատկանիշներ, որոնք ծնունդ են առել մարդկության հասարակական բնապատմական զարգացման ընթացքում:

Այնուամենայնիվ, մարդուն բնութագրելով որպես հասարակական էակ՝ բոլորովին էլ չի նշանակում, որ նա դադարում է կենդանի լինելուց, ընդհակառակը, փիլիսոփայությունը ելնում է մարդու մեջ կենսաբանականի և հասարակականի

[2] Նահապետյան Ռ., Կինը հայոց նահապետական ընտանիքում, ՊԲՀ,1/2009, էջեր՝ 71-87, http://hpj.asj-oa.am/2621/1/2009-1(71).pdf

դիալեկտիկական միասնությունից, ընդ սմին, կենտրոնական հարց դարձնելով նախ այն, թե այդ երկուսից ո՞րն է գերակայող, առաջատար ու որոշիչ մարդու հասարակական-տեսակային հատկանիշների առաջացման ու զարգացման գործընթացում և ինչպե՞ս է մարդու մեջ իրականանում է նրա երկու կողմերի փոխազդեցությունը: Այս հիմնական, սկզբունքային հարցերը սոսկ գիտական չեն, այլ ի ծնե աշխարհայացքային-ճանաչողական: Խնդրի նման դրվածքը և դրա լուծումը կանխորոշում է մարդու տեղն ու դերը հասարակության մեջ և նպաստում բնության նկատմամբ նրա իմացական պրակտիկ-վերափոխիչ հարաբերությունների կարգավորմանը[3]:

Հասարակական կյանքում մեծ ուժ են համարվում ազգային ծեսերը, ավանդույթները և սովորույթները: Իրենց նպատակները մարդիկ իրականացնում են ոչ թե մյուս մարդկանց ու կոլեկտիվների շահերից ու նպատակներից անջատ ու անկախ, այլ այնպես, որ դրանք զուգակցվեն մյուսների շահերին ու իրականացվեն հանուն այդ շահերի: Այս երկակի օրինաչափությունը ստիպում է մարդկանց ապրել բարոյական նորմերով՝ բարության, ճշմարտության և արդարության սկզբունքներով, հակառակ պարագային՝ մարդը տեղ չունի մարդկային հանրության մեջ: Ուրեմն անհատների կյանքի իմաստը խստիվ թելադրվում, նախապես ծրագրավորվում և իրականացվում է հասարակայնորեն՝ մյուս մարդկանց շահերին ու գործողություններին զուգակցված: Սա է պատճառը, որ մարդը ցուցաբերում է ստեղծագործական ակտիվություն, ստեղծում այնպիսի արժեքներ, որոնք հասարակության կողմից գնահատվում են դրականորեն: Հենց այստեղ է թաքնված մարդու կյանքի իմաստը՝ ապրելու և աշխատելու այնպես, որ հասարակայնորեն իմաստավորվի իր անհատակ կյանքը: Այլապես մարդը կհավասարվի կենդանուն:

Մարդու անհատական կյանքի իմաստը, այսպիսով, ձևավորվում է և արժեքավորվում ոչ թե նրա վերջավոր, անցողիկ անհատական կյանքով ու գործունեությամբ, այլ այն բանի գիտակցումով, որ նրա կյանքն ու գործունեությունը իմաստավորվում ու արժեքավորվում են հասարակայնորեն: Մարդու ֆիզիկական-կենսաբանական մահով չի ավարտվում նրա կյանքը: Այն շարունակվում է նախ, գենետիկորեն՝ փոխանցվելով սերնդից սերունդ, և, երկրորդ, մարդկային ցեղի անընդհատության շնորհիվ՝ ձուլվելով մարդկային պատմությանը: Այս ռեալ

[3] Գասպարյան Յու.Ա, Ավանդական ընտանիքը ժամանակակից Հայաստանում՝ Երևան 2002թ

իրողությունների շրջանակներում մարդը իմաստավորում է իրեն ու իր կյանքի իմաստը, իր արարքներն ու գործունեությունը, այն՝ թե որքանով է նա ապրել իր հարազատների, մերձավորների, արյունակիցների, մյուս մարդկանց, ազգի ու հայրենիքի, և, ընդհանրապես, հասարակության շահի և բարօրության համար: Այս բարձունքից դիտարկելով մարդկանց անհատական վերջավոր կյանքը, տեսնում ենք, որ նրա ֆիզիկական մահով չի ավարտվում նրա անհատական կյանքը: Մարդկային ցեղի հավիտենական գոյության մեջ այն շարունակվում է որպես մարդկության համաշխարհային պատմության մի մասնիկ: Մարդը անմահանումէ այս հոսքի մեջ՝ որպես ժամանակակիցների ու սերունդների համար պատմություն կերտող: Այսօրվա մարդկային հիշողության մեջ ապրում են հնագույն քաղաքակրթությունը կերտած բազմաթիվ ազգեր ու ժողովուրդներ, նյութական և հոգևոր գործունեության մեջ առավել ներդրում ունեցած հազարավոր խոշորագույն անհատականություններ, ինչպես նաև հայրենիքի ու ժողովրդի ազատության ու անկախության համար պայքարող մարտիկներ ու առաջնորդներ[4]: Քանի դեռ ֆիզիկապես գոյություն ունի հայ ժողովուրդը, հավիտենապես կապրեն Հայկ Նահապետն ու Մովսես Խորենացին, Արշակ թագավորն ու Վարդան Մամիկոնյանը, Խաչատուր Աբովյանն ու Հովհաննես Թումանյանը և հարյուր հազարավոր խոշոր անհատականություններ, իսկ հայկական նյութական ու հոգևոր կուլտուրայի մեջ՝ հայ ժողովուրդը՝ որպես իր պատմության կերտող:

Ելնելով մարդու բուն զարգացող գործունեության բովանդակության վերլուծությունից, կարող է ճիշտ հասկացվել ծեսերի,. սովորույթների և ավանդույթների առաջատար դերը, որը ներգործում է հասարակական կյանքում հենց մարդու գործունեության վրա, դեպի իրականությունն ունեցած նրա վերաբերմունքի վրա, ուստի եւ որոշում է նրա հոգեկանը, նրա գիտակցությունը:

Եւ կարելի է ասել, որ ավանդույթների, սովորույթների յուրաքանչյուր աստիճան բնութագրվում է տվյալ փուլում դեպի իրականությունն ունեցած մարդկանց որոշակի առաջատար վերաբերմունքով, նրանց գործունեության որոշակի առաջատար տիպով:

Սովորույթներից և ավանդույթներից հրաժարվելու կամ դրանց հետևելու աստիճանը հանդիսանում է հենց գործունեության առաջատար տիպի իրականության նկատմամբ մարդկանց առաջատար վերաբերմունքի փոփոխությունը:

---

[4] Социология: Учебник для вузов / ВН. Лавриненко, НА. Нартов, О.А. Шабанова, Г.С. Лукашова; Под ред. проф. В.Н. Лавриненко. 2-е изд., перераб. и доп. — М.: ЮНИТИ-ДАНА, 2002. – 407,

Առաջատար գործունեությունը այնպիսի գործունեություն է, որի զարգացումը պայմանավորվում է մարդկանց սովորույթների, ավանդույթների և ծեսերի առանձնահատկությունների գլխավոր փոփոխությունները նրա զարգացման տվյալ աստիճանում:

Կրտսեր նախադպրոցականների տարիքային բնորոշ առանձնահատկությունները

Կրտսեր նախադպրոցականներն ունեն իրեն տարիքին հատուկ մի քանի առանձնահատկությունները, որոնքնախադպրոցական տարիքի օրգանական շարունակությունն են: Առաջին հերթին այս տարիքի երեխաները շատ հետաքրքրասեր են: Նրանք գտնում են ավելի շատ բան իմանալ բնական երևույթների, մարդկանց ու շրջապատող աշխարհի մասին: Այդ պատճառով էլ նրանք բազմաթիվ ու բազմապիսի հարցեր են տալիս ուսուցիչներին, ծնողներին ու ծանոթներին: Նրանց այս հատկությունը, եթե խելացի ուսուցչի կողմից ճիշտ ուղղություն ստանա, ապա կարող է դառնալ նրանց մտահորիզոնի և գիտելիքների ընդլայնման հոգեբանական հիմք: Կրտսեր նախադպրոցականների մյուս բնորոշ գիծը նրանց հուզական բարձր գրգռվածությունն է: Ուսուցչի հուզիչ խոսքը , վառ գույները, դիտած կինոնկարը, կարդացած հեքիաթը ամբողջությամբ գրավում, կլանում են երեխաներին: Սրան հակառակ երկար ու ձանձրալի խոսքային չոր շարադրանքը, խրատական քարոզները հոգնեցնում, շեղում է նրանց ուշադրությունը:

Կրտսեր տարիքի մյուս առանձնահատկությունները ընդօրինակումն է: Նրանք շատ են սիրում կրկնել ու վերարտադրել մեծերի շարժումները, վարքի ձևերը: Նրանց ընդօրինակաման առաջին օբյեկտը ուսուցիչն է, որը նրանց համար դառնում է ամենաբարձր հեղինակությունը: ցավոք, երեխաները ընդօրինակում են նաև բացասական երևույթները, ուստի չափահասները պետք է խուսափեն բացասական վարքի ձևերից:

Կրտսեր տարիքի մյուս բնորոշ գիծը կոլեկտիվիզմն է, համատեղ աշխատանքի մեջ ներգրավվելը: Նրանք ձգտում են ամեն ինչով աչքի ընկնել, արժանանալ հասակակիցների և ուսուցիչների գովասանքին: Ուսուցչի խրախուսանքից ավելի ակտիվ ու նախաձեռնող են դառնում: Սրան հակառակ, ընկերներից ետ մնալը, պարսավանքի արժանանալը, նրանց մեջ առաջացնում է բացասական հուզական վիճակներ, հոգեկան ակտիվության անկում: Համատեղ ուսումնական աշխատանքն ու խաղը երեխաների մեջ դաստիարակում է բարոյական այնպիսի հատկանիշներ,

ինչպիսիք են աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հոգատարությունը, կամային վճռականությունը և պարտքի զգացումը[5]:

Կրտսեր նախադպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ: Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում կամածինության ձևավորումը /պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում/:

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Ուսուցիչը նաև կարող է հմտորեն կազմակերպե լերեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը: Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց

[5] Социология: Учебник для вузов / ВН. Лавриненко, НА. Нартов, О.А. Шабанова, Г.С. Лукашова; Под ред. проф. В.Н. Лавриненко. 2-е изд., перераб. и доп. — М.: ЮНИТИ-ДАНА, 2002. – 407,

կարևոր է նոր տպավորություններ ստանալու պահանջը, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը: Այս պահանջը առաջնորդում է երեխայի զարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը: Ողջ համակարգում կարևոր դեր են խաղում սոցիալական դրդապատճառների ձևավորումը, որը ի հայտ է գալիս 2-3 դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, իրԵս-ի ինքնահաստատմանը: Երեխայի դրդապատճառների առաջացման, հետաքրքրության պահպանման, Ես-ի ինքնահաստատման գործընթացում չափազանց կարևորվում է ուսուցչի դերը:

Նախադպրոցականի մոտ առաջնային են նաև բարոյական դրդապատճառների ձևավորումը, ինչում կարևոր դեր ե նխաղում իդեալների ձևավորումը, որոնք կրում են շատ հստակ բնույթ /հիմնականում տարբեր գրքային կամ հեռուստատեսային հերոսներ/, փոփոխական են և ազդում են իրենց արտաքին կողմերով:

Ուսումնական գործունեությունը փոխում է երեխայի զգացմունքների բովանդակությունը, նրանք դառնում են ավելի գիտակցված և զսպված: Դրական զգացմունքերը այժմ առաջանում են որ միայն հաճելի խաղ խաղալուց և հաճույք ստանալուց, այլ որոշակի մտավորգործունեություն կատարելուց, դժվարություններ հաղթահարելուց, մրցակցությունից: Երեխան ծանոթանում է կյանքի տարբեր սոցիալական դերերի, նրա մոտ զարգանում են բարոյական զգացմունքները: Տեղի է ունենում առկա բարոյական նորմերի, կանոնների ինտենսիվ ներքնայնացնում: Այս գործընթացում կարևորվում է մեծահասկակի դերը, որը կարող է ներկայացնել երեխային ընդունելի վարքաձևեր, նորմեր, կանոններ, զարգացնել բարոյական ինքնագիտակցությունը: 8-9 տարեկանում ի հայտ է գալիս զգացմունքների տարբերակում՝ վատն ու լավը փախարինվում են տարբեր զգացմունքների գիտակցմամբ և արտահայտմամբ: Զարգանում են ինտելեկտուալ զգացմունքները՝ հետաքրքրությունը, զարմանքը, կասկածը, ճանաչման հաճույքը և այլն:

Նախադպրոցական տարիքի հիմնական նորագոյացություններից է գործողությունների կամածինության զարգացումը, որը բավական երկարատև գործընթաց է և սկսվում է ուսումնական գործունեության ընթացքում: Ձևավորվում է կամքը, որը անընդհատ գործընթաց է, քանի որ ուսումնական գործունեության ողջ ընթացքում երեխայի առջև դրվում են նորանոր նպատակներ: Սկզբնական շրջանում

կամքի ձևավորումը մեծապես պայմանավորված է արտաքին պայմաններով՝ պահանջներով, ցուցումներով, օրինակներով, սակայն զարգացման ընթացքում երեխան սկսում է առաջնորդվելով սեփական պահանջներով, ցանկություններով, ձգտումներով: Կարևորագույն բնութագրերից է ինքնուրույնությունը, որին դրդում են մեծահասակները:

«Բարեկենդանի ծեսը»

Մասնակիցներ — Նախադպրոցական հասակ

Ժամանակահատվածը — փետրվար- մարտ ամիսներ

Ծեսի մասին

Բարեկենդան — ժողովրդական տոնախմբություն, մեծ պասին նախորդող շաբաթվա տոն է, որը նշվում է կերուխումով, խաղերով, մրցումներով:

Բարեկենդանի ծեսի ժամանակ կխաղանք ազգային խաղեր, կներկայացնենք փոքրիկ բեմականացված:

Բարեկենդան, փորեկենդան,

Բարեկենդան օրեր է,

Խելքս գլխես կորեր է…

Նպատակ

Ազգային ծիսական ավանդույթների փոխանցում

Խնդիր

- ազգային ծիսական երգերի, խաղ երգերի ուսուցում
- ծիսական խաղերի ուսուցում,
- ազգային պարային երաժշտության ուղեկցությամբ կատակ խաղ-պարերի կատարում,
- Բարեկենդանի ներկայացում, ներկայացման երաժշտական ձևավորում:

Ընթացք

Ուսումնասիրել Բարեկենդանի ծեսը, առանձնացնել այն ծիսական գործողությունները, խաղերը, որոնք իրագործվելու են: Ընտրել և ուսուցանել Բարեկենդանի ծեսին հատուկ ծիսական երգեր: Բարեկենդանի ներկայացման համար միասին ընտրել ազգային, ծիսական երգեր, պարեղանակներ, պարերգեր, խաղերգեր՝ կատարելով երաժշտական ձևավորում: Խաղալ ազգային ծիսական խաղեր, որոնք կարող են ուղեկցվել ազգային պարեղանակներով: Համապատասխան երաժշտության ուղեկցությամբ բեմականացնել կատակ-պարեր՝ օգտագործելով ինչպես պարային, այնպես էլ բեմականացված էլեմենտներ, թաշկինակներ, ձեռագործ ծիսական տիկնիկներ:

Արդյունք

Երեխաները

- կիմանան՝ որն է ազգային ծեսը,
- կկարողանան կատարել ծիսական երգեր, պարեր, խաղերգեր, պարերգեր, ծիսական գործողություններ, պատրաստել ծիսական պարագաներ,
- կլինեն ազգային մշակույթը կրող, փոխանցող:

Տոնական օրեր, տոնական եռուզեռ

Պատրաստում ենք տարբեր դիմակներ (կենդանիների, թռչունների, մրգերի, բույսերի և այլն):

Սովորում ենք տարբեր ազգային և բակային խաղեր:

Մեծ պասն եկավ, տես ինչ բերեց:

Խումբ._

Հիսուն օրեր հետը բերեց,

Սոխ ու սխտոր կանոն դրեց,

Փորիս հալը շատ վատ եղավ:

Բարով եկար, զեյթուն քեռի,

Հազար բարի օրհնած լոբի:

Բոլորը միասին.

-Եկանք ի Բարեկենդան, կերթանք ի Զատի~կ:

Ձեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Զատիկ:

Տոնախմբությունն ավարտվում է **‘Գնացեք, տեսեք’ երգով:**

Ծեսը կարող է այլ ընթացք ունենալ: Պետք է հիշել և կարևորել՝ բարեկենդանի ծեսին, բոլորն ուրախացել են, կատակել, երգել, պարել, կերել, խմել, խաղացել տարբեր

խաղեր, կազմակերպել տարբեր ներկայացումներ, ծաղրել են բոլորին՝ տերտերին, հարսին, փեսային, թագավորին, դատավորին, միշտ ներկա են եղել Ուտիս տատն ու Ակլատիզը, միշտ ուղտ են պարեցրել:

Բարեկենդանյան խաղեր

Ուտիս տատը ազատության, կերուխումի հովանավորն է:

Աքլորակռիվ

Աջ ձեռքով մեջքի կողմից բռնում են ծալված ձախ ոտքը և թռչկոտելով աջ ոտքի վրա՝ ուսով այնքան են իրար թեթևակի խփում, մինչև խաղացողներից մեկը վայր է ընկնում, պարտվում:

Գոմշակռիվ

Խաղացողները չորեքթաթ իրար հրում են ուսերով: Նույնը կատարում են կանգնած: Խաղում են կատակով՝ աշխատելով պարտվել:

Խաղ Նոզայ

Անհրաժեշտ պարագաները խորանարդիկներ կամ այլ իրեր են, որոնք իբր թե ուտելիք են, Նոզայի դիմակ, որևէ կենդանու՝ թղթից պատրաստված պոչեր, թել, արկղ:

Խաղի ընթացքը

Խաղին մասնակցում է 8 -10 երեխա: Հատակին թելով ուղղանկյուն են ստանում. Դա «սեղանն» է: Սեղանից 3-5 մետր հեռու դրվում է Նոզայի արկղը: Երեխաները «սեղանին» շարում են «մրգերը» (խորանարդները) , մեկը դառնում է խաղավար և

մյուսների հետ նստում սեղանի» մոտ: Այնպես են նստում, որ սեղանի մի կողմը բաց մնա: Մեկն էլ Նոզայ է դառնում, կանգնում սեղանից հեռու՝ իր արկղի մոտ: Հնչում է պարային երաժշտություն: Պարելով գալիս է Նոզայը: Նա պարում է, ծամածռություններ անում՝ մյուսների ուշադրությունը շեղելու համար, հարմար պահ ընտրելով՝ փորձում է սեղանից «ուտելիք» փախցնել և գցել իր արկղի մեջ: Եթե մինչև երաժշտության ավարտը (այն կարող է դաստիարակն անջատե) Նոզայը կարողանում է խորանարդ փախցնել, մի պոչ է ստանում՝ որպես խրախուսանք, եթե չի կարողանում, ուրիշն է դառնում Նոզայ: Եթե Նոզայը կարողանում է 2 անգամ պոչ ստանալ, փոխվում են «սեղանակիցները»:

Բարեկենդանի երգեր

Դան-դան

Պսակ-պսակ

Խնոցի

Գնացեք տեսեք

Էշ պատվական

Աղջկերք, պար բռնեցեք:

Փափուռի

Եզրկացություն

Այսպիսով հասարակական հարաբերությունների համակարգում երեխայի գրաված տեղի փոփոխությունն այն առաջին հանգամանքն է, որ հարկ է նշել, երբ փորձում ենք մոտենալ նրա հոգեկանի զարգացման շարժիչ ուժերի հարցի լուծմանը: Սակայն այդ տեղը, իհարկե, ինքնին չի որոշում զարգացումը, այն սոսկ բնութագրում է զարգացման առկա արդեն ձեռք բերած աստիճանը, ինչն անմիջականորեն որոշում է երեխայի հոգեկանի զարգացումը, նրա բուն կյանքն է այդ կյանքի իրական պրոցեսների զարգացումը, այլ կերպ ասած երեխայի՝ ինչպես ներքին այնպես էլ արտաքին գործունեության զարգացումը, իսկ գործունեության զարգացումն էլ իր հերթին կախված է առկա կենսական պայմաններից: Նշանակում է երեխայի հոգեկան զարգացումն ուսումնասիրելիս պետք է նշել նրա գործունեության զարգացման վերլուծությունը, քանի որ այդ գործունեությունն գոյանում է նրա կյանքի կոնկրետ պայմաններում:

Գրականության ցանկ

1. Գասպարյան Յու.Ա, ՝Ավանդական ընտանիքը ժամանակակից Հայաստանում՞ Երևան 2002թ.

2. Գասպարյան Յու.Ա., ՝Ժողովրդական ավանդույթները և սովորույթները հայ ընտանիքում՞ Երևան 2003թ.

3. Էնգելս Ֆ.. Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1965

4. Նալչաջյան Կ.՝, Ընտանեկան կյանքի փակ էջեր՞ Երևան 2003թ.

5. Նահապետյան Ռ., Ի. Ղարիբյան. Օջախ- թոնրի պաշտամունքի մի քանի սովորույթներն Աղձնիքում.– Ավանդական բանավոր ժառանգություն, ոչ նյութական մշակույթ, Միջազգային առաջին գիտաժողով, ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման մասին >կոնվենցիայի շրջանակներում, հոդվածների ժողովածու, Երևան, 2006, էջ 124-138

6. Նահապետյան Ռ., Կինը հայոց նահապետական ընտանիքում, ՊԲՀ,1/2009, էջեր՝ 71-87, http://hpj.asj-oa.am/2621/1/2009-1(71).pdf

7. Նահապետյան Ռ.. Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), Երևան, 2004

8. Социология: Учебник для вузов / ВН. Лавриненко, НА. Нартов, О.А. Шабанова, Г.С. Лукашова; Под ред. проф. В.Н. Лавриненко. 2-е изд., перераб. и доп. — М.: ЮНИТИ-ДАНА, 2002. – 407,